

Շուշանիկ ՄԵԼԻՔ-ԱԴԱՄՅԱՆ
Հայ-ուսական (Սլավոնական) համալսարան
shushan.melik.adamyam@gmail.com

ՀՈՒՉԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՏԵՍԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Հույզերի դրսևորումը լեզվում կարևոր տեղ է զբաղեցնում ժամանակակից լեզվաբանության մեջ: Սույն հոդվածում քննարկվում են հույզերի ուսումնասիրության լեզվաբանական տեսության որոշ հիմնադրույթներ: Ներկայացված են ժամանակակից լեզվաբանության մեջ տեղ գտած տարատեսակ կարծիքներ, ինչպես նաև հուզական հասկացույթի մշակութային, էթնիկ և ճանաչողական բաղադրիչներ:

Բանալի բառեր. հուզականություն, գործառույթ, հուզական հասկացույթ, մշակութային, էթնիկ և ճանաչողական բաղադրիչներ

Գիտության զարգացման արդի փուլում հույզերի ուսումնասիրությունը հայտնվել է բազմաթիվ գիտական հետաքրքրությունների կենտրոնում: Հույզերի ուսումնասիրությամբ են զբաղվում լեզվաբանները, հոգեբանները, կենսաբանները և այլք: Առավել հետաքրքրական են միջգիտական տեսանկյունից արվող հետազոտությունները, օրինակ՝ հոգե-լեզվաբանության և կենսահոգեբանության: Սակայն, բացի միջգիտական հետազոտություններից, բուն լեզվաբանության ներսում ստեղծվել է հուզականությամբ զբաղվող մի առանձին ենթաճյուղ, որը ստացել է *հույզերի լեզվաբանություն* անունը /Шаховский, 2008: 57/:

Ի համեմատ հոգեբանության՝ հույզերի լեզվաբանական ուսումնասիրությունը դեռ իր զարգացման վաղ փուլում է: Այսպես, լեզվաբան Վ. Շախովսկին կարծում է. «Լեզվաբանությունը բոլորից ուշ է գիտակցել, որ հույզերը իր ուսումնասիրության առարկան են, և դրա վերաբերյալ գիտելիքի բավարար պաշարի բացակայության պատճառով այն երկար ժամանակ չէր ձևավորում հույզերի ոլորտի ուսումնասիրության իր հիմնական մոտեցումները» /Шаховский, 2008: 7/: Կարելի է վստահորեն փաստել, որ այժմ լեզվաբանները առավել շատ ուշադրություն են դարձնում հույզերի ուսումնասիրությանը՝ մարդակենտրոն և միջգիտական ուղղությունների զարգացմանը համընթաց:

Լեզվաբանները ոչ միշտ են համակարծիք եղել՝ արդյոք հույզերի հիմնախնդիրները լեզվաբանության ուսումնասիրության առարկա են: Այսպես, լեզվաբանների մի խումբ՝ ի թիվս Գ. Գիյոմի, Է. Սեպիրի և Կ. Բյուլերի, հարում էր այն կարծիքին, որ հուզականությունը լեզվաբանության ուսումնասիրության առարկա չի կարող լինել, քանի որ այն կատարում է ավելի շատ երկրորդական գործառույթ: Մի խումբ այլ

լեզվաբաններ՝ ի թիվս Շ. Բալիի, Ջ. վան Գիննելենի, Մ. Բրեալի, պնդում էր հակառակը, որ հենց հուզականությունն է լեզվի հիմնական գործառույթը, և այն այսպիսով ենթակա է լեզվաբանական մանրակրկիտ վերլուծության: Ժամանակակից լեզվաբանության մեջ գերակշռում է այն կարծիքը, որ լեզուն ունի երեք հիմնական գործառույթ՝ հաղորդակցական, տեղեկատվական և արտահայտչական: Լեզվաբանների մի մասը առանձնացնում է հուզականության գործառույթը՝ որպես ինքնուրույն գործառույթ՝ այն համարելով առաջնային /Шаховский, 2008: 133/: Սակայն այլ լեզվաբաններ տարակարծիք են. Է. Սեպիրը նշում էր. «Մտքի արարումը լեզվի համար առավել կարևոր է, քան կամքի և հույզի դրսևորումը» /Sapir, 1921: 57/: Տարօրինակ չէ, որ Ջ. Էյչիսոնը գտնում էր, որ լեզվաբանները վախենում են հույզերից և դրանց հարիր ուշադրություն չեն դարձնում /Aitchison, 1985: 126/: Մեկ այլ տեսակետի համաձայն՝ խոսքը ծագել է հենց ցանկությունների արտահայտման համար, ինչն ինքնին ենթադրում է հուզականության բաղադրիչի առկայությունը: Այստեղ կարևոր է նաև նշել, որ, ըստ բավականին լայն տարածում ունեցող կարծիքի /Jovanović, 1990: 23/, մարդու կողմից արտաբերված առաջին բառերի թվին են դասվում բացականչությունները՝ լեզվում հուզականության դրսևորման թերևս ամենաաուղիղ արտահայտման ձևը /Jovanović, 1990: 81/:

Հուզականության վերաբերյալ տարակարծիքությունը, ինչևէ, չի խանգարել նրան, որ այս լեզվաբանական խնդիրը լայն արժարժում ստանա: 1970-1980-ական թթ. հուզականության հարցին անդրադարձել են բազում լեզվաբաններ:

Մարդակենտրոն լեզվաբանության համաձայն՝ հույզերը անքակտելիորեն կապված են մարդու հետ, այսպիսով մենք համակարծիք են այն տեսակետի հետ, որի համաձայն անհրաժեշտ է խոսել Homo emotus-ի մասին՝ զգացող մարդու, այլ ոչ միայն մտածող մարդու: Այս լատինական եզրը շրջանառության մեջ է դրել Մ. Սքայր իր՝ «Հույզերի ուժը. Ձեր կյանքը վերափոխելու համար ձեր հուզական էներգիայի օգտագործումը» գրքում /Sky, 2002/: Հիրավի, կա կարծիք, ըստ որի բոլոր մարդիկ իրենց կյանքի ընթացքում վերապրում են բոլոր հույզերը: Լ. Տոլստոյը ասում էր. «Այն, ինչ մենք ասում ենք, ոչինչ է ի համեմատ նրա, ինչ մենք զգում ենք» /http://citaty.socratify.net/lev-tolstoi/25653/: Գիտական հետազոտությունների մեջ տատանվում են այն հաշվարկները, թե քանի հույզ (կամ հիմնարար հույզ) կա: Թիվը տատանվում է չորսից մինչ վեց հազար: Հույզերը, ինչպես արդեն նշել ենք, ուսումնասիրվում են և՛ հոգեբանության, և՛ լեզվաբանության կողմից, սակայն տարբեր են ուսումնասիրման մեթոդները և ուղղվածությունը:

Ըստ Լ. Պիատրովսկայի՝ հուզականությունը լեզվական տարրերի գործառույթ է, որը կապված է օբյեկտիվ իրականության նկատմամբ խոսողի տածած հուզական վերաբերմունքի հետ /Пиотровская, 2009/:

Հուզականությունը լեզվում միտված է հաղորդակցությունը դարձնելու ավելի պարզ, հեշտ ընկալելի: Այստեղ, սակայն, մենք բախվում ենք մեկ այլ խնդրի. եթե հուզականությունը հնարավոր է արտահայտել բացառապես լեզվի միջոցով, ապա թյուր կլինի այն պնդումը, թե կամայական հույզ կարելի է արտահայտել ցանկացած լեզվի միջոցով:

Օրինակ՝ կան հույզեր, որոնք գոյություն ունեն մեկ լեզվում և նմանակը չունեն այլ լեզվում: Արդյոք սա նշանակու՞մ է, որ այդ հույզը բնորոշ չի այն լեզվակրին, ում մայրենին այն բնութագրող բառապաշար չունի: Լինում են դեպքեր, երբ մարդիկ հենց իրենք չեն կարող ձևակերպել իրենց սեփական հույզը, հետևաբար այն միշտ չէ, որ հնարավոր է արտահայտել և անբացատրելիության մի մասնիկ է կրում իր մեջ: Եթե առաջնորդվենք ըստ Լ. Պիատրովսկայի ներկայացրած սահմանման, ապա հույզը վերաբերում է օբյեկտիվ իրականությանը, սակայն հույզը ինքնին շատ սուբյեկտիվ ներքին զգացում է և չի կարող օբյեկտիվ իրականության օբյեկտիվ դրսևորում լինել: Ավելին, եթե որևէ լեզվական տարր դառնում է օբյեկտիվ իրականության օբյեկտիվ արտահայտման միջոց, ապա այն, որպես կանոն, կորցնում է իր հուզակա- նությունը: Այսպիսով, այս սահմանման մեջ հակասություն կա:

Վ. Շախովսկին պնդում է, որ հույզը գոյություն ուներ բառից առաջ, սակայն հույզից ավելի առաջ մտադրությունն էր, հաղորդակցության նպատակը /Шаховский, 2011: 40/: Այսինքն՝ ըստ այս լեզվաբանի՝ բառը արդյունք է հույզի, որն իր հերթին արդյունք է մտադրության: Ստացվում է, որ հույզը անքակտելիորեն կապված է հաղորդակցության հետ: Վ. Շախովսկին սա անվանում է *դիսկուրսային հույզ*՝ մի եզրույթ, որով նա ցանկանում է շեշտել հույզի հաղորդակցության տարր լինելու փաստը: Ըստ նրա՝ երկխոսություն է տեղի ունենում այն պահին, երբ անհատը իր հույզը բնութագրում է լեզվական միջոցներով: Հաղորդակցության տվյալ դրսևորումը կարելի անվանել երկխոսություն, անգամ եթե ֆիզիկապես բացակայում է այն անձը, որին ուղղված է խոսքը: Կարծում ենք՝ հույզի ուսումնասիրությունը ամենևին էլ հեշտ խնդիր չէ, մի կողմից ունենք հակասություն հույզի և օբյեկտիվ իրականության նրա առնչության հետ, և մյուս կողմից՝ հույզի դիտարկումը որպես լիիրավ լեզվական միավորի բարդացնում է տվյալ երևույթի անաչառ գիտական մոտեցումը:

Ըստ Ռ. Պլուչիկի՝ հույզերի սահմանումը իննսունից ավելի է /Plutchik, 1994/: Լեզվաբանական տեսակետից այն նախ և առաջ ընկալվում է որպես իմաստաբանական երևույթ: Ժամանակակից լեզվաբան- ների ուշադրության կենտրոնում է նաև *հուզական հասկացույթ* եզրը, որը հատկապես ճանաչողական լեզվաբանության համար մեծ նշանակու- թյուն ունի: Այսպես, հուզական հասկացույթը տվյալ լեզվամշակույթում հաստատված և ամրագրված միավոր է:

Սակայն նախքան հուզական հասկացույթը դիտարկելը քննության առնենք հասկացույթը ընդհանրապես: Ա. Վերբիցկայան հասկացույթը

սահմանում է հետևյալ կերպ. «հասկացույթը երևակայական աշխարհից մի առարկա է, որն արտացոլում է իրական աշխարհի մշակութային ըմբռնումը» /Wierzbicka, 1980: 23/: Հասկացույթների դասակարգումները բազում են: Այսպես, Ի. Ստերնինը առանձնացնում է հասկացույթում երեք բաղկացուցիչ տարր՝ հուզական պատկեր, բովանդակային տեղեկատվություն և տեղեկատվային դաշտ /Попова, Стернин, 2002: 59/: Մեկ այլ դասակարգում պատկանում է Գ. Ալիշկինին, որը տարբերում է հասկացույթի ներքին գոտին (интразона) և արտաքին գոտին (экстразона) /Слышкин, 2004: 103/: Առաջինը, կարծում ենք, կարելի է նույնականացնել հիմնանշանակության հետ, իսկ վերջինը՝ հարանշանակության: Նա գտնում է, որ գոյություն ունեն հասկացույթներ, որոնց ներքին գոտին հեզհետե լայնանում է, իսկ արտաքին գոտին բացակա է, քանի որ գործ ունենք շատ բարձր աստիճանի վերացական հասկացույթների հետ: Բարձր աստիճանի վերացականությամբ բնորոշվող հուզական հասկացույթները դասվում են այդ հասկացույթների շարքին:

Չնայած բազմաթիվ են նաև հուզական հասկացույթին վերաբերող ձևակերպումները, կուզենայինք առանձնացնել Ն. Կրասավսկու հետևյալ սահմանումը. հուզական հասկացույթը բարդ կառուցվածքա-իմաստային միավոր է՝ պայմանավորված ազգային և մշակութային առանձնահատկություններով, որպես կանոն արտահայտված է բառով կամ դարձվածաբանական միավորով, ունի հասկացութային հիմք, որը ներառում է բացի հասկացույթից նաև պատկեր, գնահատական և հաստատված կողմնապահ վերաբերմունք, որն ժամանակի ընթացքում արմատավորվել է մարդու մեջ տվյալ երևույթի հանդեպ /Красавский, 2008: 49/:

Ըստ Սեպիր-Ուորֆի տեսության՝ լեզուն և միտքը անբաժանելի են, և լեզուն դառնում է գրեթե անհասկանալի նրանց համար, ում մտածելակերպը տարբերվում է լեզվակիրների մտածելակերպից: Այլ կերպ ասած՝ լեզու իմանալ նշանակում է իմանալ հասկացությունների մի շարք, որոնք արձարձված են այդ լեզվում: Է. Սեպիրը նշում է. «Մարդկանց պահվածքը պայմանավորված չէ միայն օբյեկտիվ աշխարհով, ոչ էլ հասարակությունով, այն էապես կախված է տվյալ լեզվից, որը դարձել է այդ հասարակության համար ամենակարևոր արտահայտման միջոցը» /Sapir, 1958 [1929]: 69/: Չնայած է. Սեպիրը նկատի ուներ լեզուն ընդհանրապես, կարծում ենք, որ այս գաղափարը կարելի է կիրառել ցանկացած լեզվական միջոցի, և մասնավորապես, հուզականության դաշտի համար: Անգլիախոս հասարակության համար հուզականությունը արտահայտվում է յուրովի: Դրա արտահայտման միջոցներից են հուզական հասկացույթները: Սակայն ինչպե՞ս են հույզերը հարաբերվում օբյեկտիվ աշխարհի հետ: Է. Սեպիրը գտնում է, որ «մենք տեսնում և լսում ենք և այլ զգայարանների միջոցով ապրում ենք որևէ բան միմիայն այն պատճառով, որ լեզուն պարտադրում է մեզ կատարել որոշակի մեկնության ընտրություն» /Sapir, 1958 [1929]: 234/: Եթե անգլերենում չկա որևէ

հույզի հասկացույթ, ապա այն հնարավոր չէ ընկալել անզլերենով, և հակառակը: Անզլերենի բոլոր հուզական հասկացույթների համար համընդհանուրն այն է, որ մարդիկ դրանք ապրում են կամ կարող են հեռանկարում ապրել: Հուզական հասկացույթը ներառում է երեք բաղկացուցիչ տարր՝ մշակութային, էթնիկ և ճանաչողական, որոնք անքակտելիորեն կապակցված են միմյանց և միասին կազմում են հասկացույթի էությունը: Սա նշանակում է, որ որևէ հույզ չի կարող չապրունակել այս երեք տարրը: Կան բազմաթիվ օրինակներ, որոնք փաստում են, որ որևէ հուզական հասկացույթ կարող է բացակայել մի լեզվից, մինչդեռ այն ներկա է մեկ ուրիշում:

Դրա վառ օրինակն է անզլերենի *bittersweet* բառը, որն ուղիղ թարգմանությունն չունի: Ի տարբերություն բազում այլ հույզերի՝ այն իր հիմնանշանակությամբ արդեն և՛ դրական է, և՛ բացասական: Այսպես, *bitter* արմատը նշանակում է *դառը*, իսկ *sweet* արմատը՝ *քաղցր*: Այն հիմնականում կիրառում են հիշողությունները նկարագրելիս. անզլիալեզու մի երաժշտական խումբ՝ *Bullet For My Valentine*, նույնիսկ այդ վերնագրով երգ ունի՝ *Bittersweet Memories*:

Եթե փորձենք այն հայերեն թարգմանել, ապա պիտի դիմենք բացատրական բառարանին: *Manmar* հրատարակչության անզլերեն-հայերեն բառարանում տրված է երկու թարգմանություն. մեկ բառով՝ *դառնաքաղցր*, իսկ բացատրական թարգմանությամբ՝ *դառնություն պատճառող և միաժամանակ քաղցր (հուշեր ևն)* /Անզլերեն-հայերեն բառարան, 2011: 56/: Կարծում ենք, որ եթե նույնիսկ *դառնաքաղցր* բառը գոյություն ունի հայերենում, ապա այն չի արտահայտում անզլերեն *bittersweet* բառի մշակութային բաղադրիչը: Անզլերենում վերջինս կարող է արտահայտել տարբեր հույզեր՝ *ափսոսանք, կարոտ, թախիծ*:

Սակայն հույզերի դրսևորումը տարբերվում է ոչ միայն լեզվից լեզու, այլև միևնույն լեզվի ներսում: Որպես օրինակ դիտարկենք գիտական ոճին պատկանող հետևյալ նախադասությունը՝ *We dread the consequences* (Մենք սարսափում ենք հետևանքներից): Այստեղ կիրառվել է *վախ* հույզի հասկացութային դաշտին պատկանող *dread* (սարսափել) բառը: Սակայն գիտական ոճում չի կարելի այն կիրառել մեկ այլ բառի հետ, օրինակ՝ *I dread the exam* (ես քննությունից սարսափում եմ): Կիրառական այսպիսի մեծ տարբերությունը պայմանավորված է, նախևառաջ, անզլերենում *dread* բառի տարբեր երանգավորմամբ: Այսպես, առաջին դեպքում այն ցույց է տալիս գիտական մտահոգություն, այն է՝ որևէ բանի սխալ լինելը, իսկ երկրորդ դեպքում այն իսկապես հուզական իմաստ ունի և պատկանում է *վախ* հույզի հասկացութային դաշտին: Հետաքրքիրն այստեղ այն է, թե ինչպես սահմանել *dread* բառի երկու դրսևորումները՝ որպես մի բառի երանգավորում, թե տարբեր իմաստ ունեցող, հետևաբար՝ տարբեր հասկացույթների պատկանող երկու առանձին բառ: Սա, թերևս, մի բառի երկու տարբեր երանգավորում է, և

քանի որ այս բառը *վախ* հասկացույթի դաշտին է պատկանում, ապա նրա բոլոր կիրառությունները՝ ներառյալ առաջինը՝ գիտականը, նույնպես պատկանում են միևնույն հասկացութային դաշտին և, այսպիսով, հուզականության դրսևորում են:

Հուզական հասկացույթի ազգային, էթնիկ բաղադրիչը ներկայացված է մարդկանց կոնկրետ հանրության այնպիսի սոցիո-հոգեբանամշակութային բնորոշիչներով, ինչպիսին են *ավանդույթները, սովորույթները, նիստուկացը, առօրյա կյանքի առանձնահատկությունները, մտածելակերպի կարծրատիպերը, վարքի նորմերը* և այլն, որոնք պատմականորեն ձևավորվել են էթնոսի զարգացման, կայացման ընթացքում: Այլ կերպ ասած՝ հենց էթնիկական բաղկացուցիչն է առավել վառ արտահայտում լեզվակիրների էթնոսների մեջ գոյություն ունեցող տարբերությունները: Բազում օրինակներից առանձնացնենք անգլերենի *depression* հույզը, որն արտահայտում է կարոտ, սակայն, ի տարբերություն այլ լեզուների, ունի նաև հիվանդ լինելու իմաստը: Սա նշանակում է, որ այն արտացոլում է տվյալ լեզվի մտածելակերպի կարծրատիպերը: Հայերենում, ռուսերենում և մի շարք այլ լեզուներում *կարոտ* հույզը որպես հիվանդություն *depression* թարգմանվում է համապատասխանաբար որպես *ընկճախտ* և *դեպրեսիա /депрессия/*:

Հուզական հասկացույթի երրորդ բաղադրիչն է ճանաչողականը, այն ներառում է արտահայտչականությունը, հույզին տրվող գնահատականը, որը կարևորվում է լեզվակրի կողմից:

Ճիշտ է նաև այն պնդումը, որ լեզուն՝ որպես անընդհատ փոփոխվող օրգանիզմ, փոխկապակցված է մշակույթի, լեզվակիրների համատեքստի և արտահայտչականության փոփոխության հետ: Նույնը վերաբերում է, իհարկե, հուզական հասկացույթին, որը ժամանակի ընթացքում և այլ մշակույթների հետ փոխշփման ընթացքում փոփոխություններ է կրում:

Անգլերենի հուզականության դաշտը պարունակում է որոշ հուզական հասկացույթներ, որոնք տարբերվում այլ լեզուների նմանատիպ հասկացույթներից կամ իսպառ բացակայում են դրանցում: Ճիշտ է նաև հակառակ պնդումը. գոյություն ունեն բազում հուզական հասկացույթներ, որոնք բացակայում են անգլերենում և ներկա են այլ լեզուներում: Դրանցից է գերմաներենի *Herrliches Gefühle* հասկացույթը, որը թարգմանաբար նշանակում է *հիանալի զգացմունքներ* և իր մեջ ներառում է մի շարք դրական հույզեր: Անգլերենը այդպիսի հուզական հասկացույթ չունի: Այն նկարագրում է հույզերի մի ամբողջ խումբ, որն անգլերենում մեկ արտահայտությամբ չկա: Իսկ որպես ավելի հստակ հույզի օրինակ նշենք արաբերենի *Tarab (طرب)* հուզական հասկացույթը, որը երաժշտությունից ծնված էսքտազ կամ հրապուրանք է ցույց տալիս: Անգլերենում այն կարելի է ներկայացնել միմիայն բացատրական թարգմանության տեսքով, օրինակ՝ *joy derived from music*:

Հուզականության դաշտի լեզվաբանական ուսումնասիրությունը, այսպիսով, պետք է ներառի հուզական հասկացությունների բազմակողմանի հետազոտություն՝ ընդգրկելով վերոնշյալ բոլոր երեք բաղադրիչները: Այն կարևորվում է մանավանդ ճանաչողական լեզվաբանության բուն զարգացման համատեքստում: Կարծում ենք, որ, ինչպես հուզական հասկացությունը, այնպես էլ հույզերի լեզվաբանական ուսումնասիրությունը ընդհանրապես բազմակողմանի հետազոտման կարիք ունեն, որը թույլ կտա մշակելու հույզերի լեզվաբանության տեսական հիմքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Aitchison J. Cognitive Clouds and Semantic Shadows // *Language and Communication*, vol. 5, No. 2, 1985.
2. Jovanović M. (ed.) Translation, a Creative Profession. Belgrade: Prevodilac, 1990.
3. Plutchik R. The Psychology and Biology of Emotion. New York: Harper & Collins College Publisher, 1994.
4. Sapir E. Culture, Language and Personality: Selected Essays. California: University of California Press, 1958.
5. Sapir E. Language: an Introduction to the Study of Speech. New York, Harcourt, 1921.
6. Sky M. The Power of Emotion: Using Your Emotional Energy to Transform Your Life. The United States: Capital City Press, 2002.
7. Wierzbicka A. *Lingua Mentalis: The Semantics of Natural Language*. Sydney/New York: Academic Press, 1980.
8. Красавский Н. А. Эмоциональные концепты в немецкой и русской лингвокультурах. М.: Гнозис, 2008.
9. Пиотровская Л. А. «Язык описания эмоций» и «язык выражения эмоций»: новое решение старой проблемы // *Язык и эмоции: номинативные и коммуникативные аспекты*, сб. науч. тр. к юбилею Виктора Ивановича Шаховского. Волгоград: Волгоград. науч. изд-во, 2009.
10. Попова З.Д., Стернин И.А. Понятие «концепт» в лингвистических исследованиях. Воронеж: Изд. ВГУ, 1999.
11. Попова З.Д., Стернин И.А. Язык и национальная картина. Воронеж: Истоки, 2002.
12. Слышкин Г.Г. Лингвокультурные концепты и метаконцепты. Дисс. на соиск. уч. степ. доктора филол. наук. Волгоград, 2004.
13. Шаховский В. И. Дискурсивность эмоций в человеческой коммуникации. // *Известия Волгоградского государственного педагогического университета*, т. 62, № 8. Волгоград, 2011.

14. Шаховский В. И. Лингвистическая теория эмоций. М.: Гнозис, 2008.
15. Անգլերեն-հայերեն բառարան. MacMillan Essential Dictionary. comp. by A. Lazaryan et al. Երևան, Մանմար, 2011.
16. <http://citaty.socratify.net/lev-tolstoi/25653>

Յ. ՄԵԼԻԿ-ԱԴԱՄՅԱՆ – *О некоторых теоретических аспектах эмотивности.* – Проблема репрезентации эмоций в языке занимает важное место в современной лингвистической науке. Обзор специальной литературы по данной проблеме позволяет автору рассмотреть некоторые теоретические аспекты лингвистической теории эмотивности, а также культурные, этнические и когнитивные составляющие эмотивного концепта.

Ключевые слова: эмотивность, функция, эмотивный концепт, культурные, этнические и когнитивные составляющие

Sh. MELIK-ADAMYAN – *On Some Theoretical Aspects of Emotiveness.* – The problem of representation of emotions in languages plays a key role in modern linguistics. An overview of professional literature on the subject entitles the author to discuss some theoretical aspects of linguistic theory of emotivity. The paper analyzes cultural, ethnic, and cognitive components of the emotive concept.

Key words: emotiveness, function, emotive concept, cultural, ethnic and cognitive components